ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«30» մայիս 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-53/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ի 13.05.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 13.05.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպած «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-14/1» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որի շրջանակներում 15.04.2016թ.

www.armeps.am կայքի միջոցով՝ էլեկտրոնային եղանակով, հաջողությամբ հայտ է ներկայացրել:

10.05.2016թ. Պատվիրատուի կողմից Ընկերությունը տեղեկացվել է, որ վերջինիս հայտը մերժվել է 15.04.2016թ.՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերության մոտ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության պատճառով:

Ըստ «ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ի՝ հայտը մերժվել է՝ հիմք ընդունելով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները, համաձայն որի Ընկերությունը 15.04.2016թ. դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ՝ հարկերի և պարտադիր սոցիալական վճարների գծով:

Ընկերությունը բողոքով հայտնել է, որ Ընկերության կողմից կատարվել է հարկերի և այլ պարտադիր վճարների վերահաշվարկ, որի արդյունքում «ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ն 15.04.2016թ. դրությամբ չունի հարկային պարտավորություններ, որին ի հավաստումն՝ Ընկերությունը բողոքին կից ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Շենգավիթ հարկային տեսչության կողմից 12.05.2016թ. տրված տեղեկանքը առ այն, որ Ընկերությունը 15.04.2016թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի դրույթները, համաձայն որի «ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ի հայտը չպետք է մերժվեր և Ընկերությունը պետք է ճանաչվեր Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ «ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-53/16 բողոքը քննող հանձնաժողովի 19.05.2016թ. ժամը 17:30-ին կայացած նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը 26.05.2016թ. թիվ ԴՎԱ/1411 գրությամբ ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-14/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված Ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո, սահմանված կարգով, ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացվել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացված՝ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև Կարգ) 48-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն՝ «ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ուներ ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հիմք ընդունելով նշված հանգամանքը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության հայտը և 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել տվյալ չափաբաժինների մասով հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցներին:

3. ԳԲԽ-53/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-53/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-14/1»

ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. «ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-14/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով ***15.04.2016թ.*** հայտ է ներկայացրել:

3. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.04.2016թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի թվով 6 չափաբաժինների մասով:

5. Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 03.05.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ի վերաբերյալ:

6. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.05.2016թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ ***«ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (15.04.2016թ.) ունի ժամկետանց հարկային պարտավորություն 491 379 ՀՀ դրամի չափով:***

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.05.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2-րդ կետով կայացված որոշմամբ «ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

8. «ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 13.05.2016թ. ներկայացրած բողոքին կից ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչության կողմից 12.05.2016թ. տրված տեղեկանքը, համաձայն որի ***«ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ն 15.04.2016թ.՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ***

չունի ժամկետանց հարկային պարտավորություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

9. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 20.05.2016թ. թիվ 02/04.1/1969-16 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին, խնդրելով հայտնել, թե «ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ն ***15.04.2016թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** ունեցել է արդյոք ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, թե ոչ:

10. Կենտրոնի սույն եզրակացությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացնելու օրվա դրությամբ՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից չի ստացվել Կենտրոնի 20.05.2016թ. թիվ 02/04.1/1969-16 գրությանն ի պատասխան ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի համապատասխան գրությունը:

4. ԳԲԽ-53/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ի 13.05.2016թ. ներկայացրած բողոքը, 26.05.2016թ. թիվ ԴՎԱ/1411 գրությունը, ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչության կողմից 12.05.2016թ. տրված տեղեկանքը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

«ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-14/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակցության ***15.04.2016թ.*** հայտի N 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***

Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 03.05.2016թ. կատարված

հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է եզրակացություն, համաձայն որի՝ ***«ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (15.04.2016թ.) ունի ժամկետանց հարկային պարտավորություն 491 379 ՀՀ դրամի չափով:***

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.05.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2-րդ կետով կայացված որոշմամբ «ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Ընկերությունը 13.05.2016թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը չի համապատասխանում իրակա-նությանը, քանի որ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվել է հարկերի և պարտադիր այլ վճարների վերահաշվարկ, որի արդյունքում «ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորութ-յուն:

Ընկերությունն, ի հավաստումն իր պնդմանը, ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչության կողմից 12.05.2016թ. տրված տեղեկանքը, ***համաձայն որի Ընկերությունը 15.04.2016թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:***

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 20.05.2016թ. թիվ 02/04.1/1969-16 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին, խնդրելով հայտնել, թե «ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ն ***15.04.2016թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** ունեցել է արդյոք ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, թե ոչ:

Սակայն Կենտրոնի սույն եզրակացությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացնելու օրվա դրությամբ՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից չի ստացվել Կենտրոնի 20.05.2016թ. թիվ 02/04.1/1969-16 գրությանն ի

պատասխան ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի համապատասխան գրությունը:

Կենտրոնը արձանագրում է, որ Ընկերության կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչության կողմից 12.05.2016թ. տրված տեղեկանքը, ***համաձայն որի Ընկերությունը 15.04.2016թ.՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:***

Այսպիսով, հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչության կողմից 12.05.2016թ. տրված տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը 15.04.2016թ.՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, Կենտրոնը գտնում է, որ Ընկերության բողոքը հիմնավոր է:

Ելնելով վերոգրյալից Կենտրոնը առաջարկում է «ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ի 13.05.2016թ. բավարարել և դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՇՁԲ-14/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.05.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.2-րդ կետով կայացված «ԷՅՋԻ Տպարան» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-53/16 բողոքը

քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան